Սա բազմաթիվ վաճառականների մուրհակներ ուներ, որ նրան դարձրել էին իրենց փոխարեն իրենց ինչքերի տեր, որ ուր լինեն պարտատերերը, սրանք իրենց պարտքերը տան Աղամալին:

Ջուղայում էր Սաֆրազ անունով մեծ մեկը, որ Ջուղայի ավագն էր: (Ջուղայում էր) նաև Պողոս անունով Օնոփրիոսի եղբայրը: Սա խոջա Սաֆրազին պարտք էր հինգ հարյուր թուման իր ստորագրությամբ: Այժմ Աղամալը եկել, պահանջում էր հինգ հարյուր թումանը: Լսեց նաև սուտ մուրհակի մասին, որ Օհանավանքի դեմ արել էին: Աղամալը բռնեց Պողոսին, վիզը կունդ դրեց և կախելով բերդի դռնից՝ փայտով ոտքերը այնքան ծեծեցին, մինչև առան երկու կեղծ մուրհակները և պատռեցին: Բայց քառասուն թուման հանեցին Պողոսի հինգ հարյուր թումանից:

Աղամալի գալուց հետո Օնոփրիոսը մի այլ չարություն ևս արեց, դարձյալ պահանջեց Օհանավանքի երեք հարյուր թումանը՝ ասելով, թե բռնի առաք իմ մուրհակը, ուստի տվեք իմ երեք հարյուր թումանը և լրիվ պահանջում էր: Բայց նույն օրը հունաց երկրից կաթողիկոսը եկավ և սաստելով լռեցրեց նրան:

Համառոտ կպատմեմ նրա չարության պատմությունը: Երբ կաթողիկոսը կալանավորվեց, նրան տվեց Գեղամա գավառի նվիրակություն, իսկ երբ կաթողիկոսը փախավ, նվիրակությունը թողեց, եկավ դարձավ խանին բարեկամ, և (երկուսը) չարիքներ էին մտմտում կաթողիկոսի դեմ: Ամեն օր նոր լուր էին տարածում, թե Օնոփրիոսի համար կաթողիկոս լինելու արքունի հրաման է գալիս: Երբ խանը կործանվեց, Կարկուտը (Օնոփրիոսը) տարակուսանքի մեջ ընկավ, այդ պատճառով անճարացած ինքը ելավ գնաց Պարսկաստան, որպեսզի գոնե կաթողիկոսը հաշտվի իր հետ: Հասնելով Նիգբ գյուղը, և ահա դիվանապետի կողմից մարդիկ եկան և բռնեցին նրան, վիզը կունդ դրին և առնելով տարան մինչև Զանկյան քաղաքը, այնտեղ նրան պահ տվին, իսկ իրենք գնացին Ղազվին ու ծանուցեցին կաթողիկոսին: Նա բարկացած ասաց՝ ո՞ւմ հրամանով արեցիք այդ, երբ ես չգիտեմ: Ասացին՝ դիվանապետի հրամանով արինք: Ապա կաթողիկոսը հրամայեց արձակել նրան և բերել իր մոտ: Եկավ կաթողիկոսի մոտ, նրա հետ սիրովացավ, կաթողիկոսը նրան հանձնեց տան գործերի վերակացությունը: Եվ միամտությամբ սիրով էր նրա հետ:

Իսկ այն չարը էլի չէր դադարում գաղտնի իր լրբությունը գործադրել: Քանզի առանց կաթողիկոսի գիտության շատ պարտքեր արեց և չարություն էր մտմտում, որի մասին հետո կգրեմ: Իսկ կաթողիկոսը մյուս անգամ աղերս պատրաստեց և գրեց խնդրագիր, առավ գնաց շահի մոտ և մատուցեց աղերսն ու խնդրագիրը: Շահը ասաց՝ ես վաղն եկեք դրան հրաման կտամ: Դեռևս այստե՞ղ է դա: Մեծամեծները ասացին, նա հրաման չունի, այդ պատճառով չի կարող գնալ:

Շահը հրամայեց հրաման տալ և նվիրել նրան արքունական խիլա (հանդերձանք-նվեր) ըստ սովորույթի գեղեցիկ ոսկենկար պատմուճան, թանկագին գոտի, սամույրե վերարկու, գլխի քցափ (հոգևորականի գլխարկ), այսինքն՝ մանդիլ և զորեղ ձի: Ի պատիվ կաթողիկոսի՝ Սաֆի խանին, որ Թավրիզի Ռոստոմ խանի որդին էր, իշխան նշանակեց, ուղարկեց Երևան և կաթողիկոսին հանձնեց նրան:

Եվ մենք Ղազվինից Կարկուտի հետ ելանք ֆրանկների դեսպանների հետ եկանք Թավրիզ: Կաթողիկոսը խանի հետ գնաց Արտաբիլ, այնտեղից խանի հետ գնաց Թավրիզ: Օրեր հետո խանը ելավ Երևան գնալու, Կարկուտը նույնպես գնաց: Երկու օր հետո գնաց նաև կաթողիկոսը: Հայտնության ճրագալույցին Օնոփրիոսը մտավ Երևան, հաջորդ օրն էլ՝ կաթողիկոսը: Կարկուտը զգեստավորվեց ջրօրհնեքն անելու խանի առջև: Զգեստը վրայից հանեցին հագցրին կաթողիկոսին և մեծահանդես ջրօրհնեք արին խանի ներկայությամբ: Երկրորդ օրը խանից թույլտվություն ստացավ, որ գնա Սուրբ Էջմիածին, ինչ որ Կարկուտի նկատմամբ անելու է, անի:

Ելան, գնացին, իսկ ճանապարհին Կարկուտին հայտնեցին իր կորստի մասին: Նրա դեմքը սևացավ ինչպես ածուխ, բայց ոչ մի բան չկարողացավ անել: Երբ մտան Սուրբ Էջմիածին, եկեղեցու մեջ կաթողիկոսը վերցրեց մկրատը և խուզեց գլուխը, ապա մորուքը: Նա ասաց՝ ի սեր Աստծու աղաչում եմ՝ գլուխս խուզեցիր, մորուքս մի խուզիր: Կաթողիկոսն ասաց՝ ո՛վ Աստծուն ատելի, դու ասել ես, թե ես կկտրեմ կաթողիկոսի գլուխը և կտնկեմ այն իջման տեղին և նրա վրա պատարագ կանեմ: Արդ քո մորուքը ավելի՞ մեծ է, քան իմ գլուխը, ընդունիր փոխարենը: Եվ խուզեցին բոլոր մազերը և նրան տարան գցեցին բանտի առջև իր շղթաներով: